

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՈՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՔՈԼԵՉՈՒՄ

Եվրոպայի քոլեջի շրջանավարտների հայաստանյան ասոցիացիան Շրջանավարտների դեսպանության ծրագրի շրջանակում սիրով հրավիրում է Ձեզ մասնակցելու Եվրոպական քոլեջի ակադեմիական և կրթաթոշակային ծրագրերի ներկայացմանը:

Վայրը՝ օնլայն հարթակ:

Օրը և ժամը՝ դեկտեմբերի 3-ին և 4-ին, ժամը 15:00-ին:

Ում է հասցեագրված՝ հանդիպումը նախատեսված է բակալավրիատի վերջին կուրսի և մագիստրատուրայի ուսանողների համար:

Հանդիպմանը մասնակցելու համար գրանցվել [այստեղ](#), վերջնաժամկետ՝ 01.12.2020:

Եվրոպայի քոլեջի երկու մասնաճյուղերը տեղակայված են Բելգիայում՝ Բրյուզելում, և Լեհաստանում՝ Նատոլինում (Վարշավա): Քոլեջը տրամադրում է մագիստրոսական կրթություն Եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում տարբեր մասնագիտացումներով:

2021-2022 ուստարվա համար դիմումները բաց են մինչև 2021 թ. հունվարի 13-ը:

Հանդիպման ընթացքում կներկայացվեն՝

քոլեջի ակադեմիական ծրագրերը,

ընդունելության կարգը և պահանջվող փաստաթղթերը,

ամբողջական կրթաթոշակ ստանալու անհրաժեշտ պահանջները,

քոլեջի ընձեռած ակադեմիական և հետագա կարիերայի հնարավորությունները,

քոլեջի ակադեմիական մեկ տարվա այլ մանրամասներ:

Միջոցառումը կվարի Եվրոպայի քոլեջի 2020 թ. շրջանավարտ, Քոլեջի շրջանավարտների 2020 թ. հայաստանյան ներկայացուցիչ Անժելա Մնացականյանը:

Հանդիպմանը տեղեկատվությամբ զինված և արդեն իսկ կոնկրետ հարցերով ներկայանալու համար ծանոթացեք Եվրոպայի քոլեջին՝ [այստեղ](#), ըստ երկրների տրամադրվելիք կրթաթոշակներին՝ [այստեղ](#), Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների բուհերի շրջանավարտներին տրամադրվելիք կրթաթոշակներին՝ [այստեղ](#):